

## Եվրոպական ժողովրդավարական չափանիշների ազդեցությունը Լեհաստանի սահմանադրական զարգացումների վրա 1989թ. հետո\*

ԵԺԻ ՅԱՍԿԻԵՐՆԻԱ

Յան Կոչանովսկի համալսարան, Լեհաստան

Ստացված է 16.09.2014

Ընդունված է 17.01.2015

*Հոդվածում ուսումնասիրվում է 1989 թվականից հետո Լեհաստանում մեկնարկած սահմանադրության մշակման գործընթացը: Թեև Լեհաստանը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ժողովրդավարական զարգացման ուղի ընտրած առաջին սոցիալիստական երկիրն էր, այդուհանդերձ սահմանադրության ընդունման համար պահանջվեց գրեթե ութ տարի: Հոդվածում քննարկվում են սահմանադրության շուրջ փոխզիջումների հասնելու բարդության պատճառները: Ընդգծվում է այդ գործընթացում եվրոպական ժողովրդավարական չափանիշների ազդեցությունը: Թեև այն ավելի զգալի էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի այլ երկրներում, այդուհանդերձ Լեհաստանի սահմանադրության մի շարք հոդվածներ գրեթե նույնությամբ փոխառվել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից: Եվրոպայի խորհրդի (ԵԽ) առաջադրած գլխավոր նպատակներից էր Լեհաստանում ազատ խորհրդարանական ընտրությունների անցկացման ապահովումը՝ որպես կառույցին անդամակցության նախապայման: Լեհաստանի սահմանադրական զարգացումների վրա ԵԽ-ի հիմքում ընկած մինևույն արժեհամակարգը կրող այլ եվրոպական կազմակերպությունների (Եվրոպական Միություն, ԵԱՀԿ) ազդեցությունն ավելի թույլ էր:*

### Բանալի բառեր

Լեհաստանի սահմանադրություն, անցում դեպի ժողովրդավարություն, սահմանադրական զարգացումներ, եվրոպական չափանիշներ:

### Նախաբան

Լեհաստանի Հանրապետության սահմանադրությունն ընդունվել է երկպալատ խորհրդարանի (Սեյմ և Սենատ) կողմից 1997 թվականի ապրիլի 2-ին, այնուհետև 1997 թվականի մայիսի 25-ին հաստատվել է համաժողովրդական հանրաքվեով: Հատկանշական է, որ սահմանադրության ընդունման համար պահանջվեց գրեթե ութ տարի: Բավական

\* Հոդվածը «Սահմանադրական գործընթացների ազդեցությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի վրա» (Երևան, 3-4 նոյեմբերի, 2014թ.) համաժողովում ներկայացված զեկույցի լրամշակված տարբերակն է:

երկար ժամանակ Լեհաստանը՝ առաջին հետխորհրդային երկիրը, որը 1989 թվականին թևակոխեց ժողովրդավարական բարեփոխումների փուլ, չէր կարողանում ընդունել արդիական և լիարժեք ժողովրդավարական սահմանադրություն: Հողվածում փորձ է արվում բացահայտել, թե որոնք են սահմանադրության մշակման գործընթացի տևականության պատճառները և, մասնավորապես, որքանով են ԵՄ առաջադրած ժողովրդավարական չափանիշներն ազդում այդ գործընթացի վրա:

### **Սահմանադրական զարգացումները Լեհաստանում 1989-1997 թվականներին**

1989 թվականին տեղի ունեցան Լեհաստանում զգալի փոփոխություններ: Բախվելով սոցիալական և տնտեսական մարտահրավերների, ինչպես նաև խորհրդային համակարգում ընթացող տրանսֆորմացիայի գործընթացների, Լեհաստանի Միավորված աշխատավորական կուսակցությունը համաձայնեց երկխոսության մեջ մտնել ժողովրդավարացում պահանջող ընդդիմության հետ: Իշխող կուսակցությունը համակարգային փոփոխություններով նախատեսել էր զիջումներ ընդդիմության հետ հարաբերություններում՝ միաժամանակ շարունակելով կուսակցության ձեռքում պահել զգալի ազդեցություն պետության կառավարման վրա: Կոմունիստական կուսակցության և ընդդիմության միջև հիմնական համաձայնությունները ձեռք բերվեցին «կլոր սեղան» քննարկումների ժամանակ<sup>1</sup>:

1989 թվականին երկրում մեկնարկած քաղաքական նախաձեռնություններն ակնհայտորեն ուղղված էին նախկինում գոյություն ունեցող կառավարման համակարգի դեմ: Սկզբնական շրջանում, նույնիսկ առանց գործող սահմանադրական նորմերի պաշտոնական փոփոխության, դրանցից շատերը դադարեցին գործել այն ժամանակ, երբ ժողովուրդը վերականգնեց իր ինքնիշխանությունը երկրում, ինչն ուղղակիորեն դրսևորվեց 1989 թվականի հունիսի 4-ի ընտրությունների արդյունքում: Որոշ սահմանադրական սկզբունքներ, որոնք

<sup>1</sup> **Tuleja P.**, Introduction, *Polish Constitutional Law. The Constitution and Selected Statutory Materials*, eds. E. Gierach, P. Chybalski, Chancellory of the Sejm, Warsaw, 2009, p. 8.

անդրադառնում էին «սոցիալիստական պետությանը», աշխատավոր դասի առաջատեր դերին, բանվորագյուղացիական դաշինքին՝ որպես «գյուղաբնակ և քաղաքաբնակ աշխատավոր դասի ինքնիշխանության» հիմքի, «սոցիալիստական ժողովրդավարության» գործարկմանը և խթանմանը, պարտադիր իրավական նորմերին՝ որպես «աշխատավոր դասի ցանկությունների և շահերի արտահայտման» մեխանիզմի, ինչպես նաև համանման այլ սահմանադրական հարցերի, ի չիք դարձան: Լեհ ժողովուրդը բացահայտորեն արտահայտեց բազմակարծ ժողովրդավարական համակարգում ապրելու ցանկություն, որին բնորոշ են օբյեկտիվ արժեքներ ներկայացնող օրենքի գերակայություն, մարդու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանք և «խելամիտ» տնտեսություն<sup>2</sup>:

Նախկին սահմանադրության (ընդունվել էր 1952 թվականի հուլիսի 22-ին) հիմնարար սկզբունքների ժխտման արդյունքում (թեև միայն փաստացի) 1989 թվականի ամռանն առաջացած սահմանադրական վակուումը համարվեց նոր սահմանադրական դրույթներով: 1989թ. դեկտեմբերի վերջին խորհրդարանն ընդունեց սահմանադրության համակարգային փոփոխությունների վերաբերյալ նախագիծ: Սահմանադրության տեքստից ամբողջությամբ դուրս բերվեցին քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերին առնչվող սկզբունքների վերաբերյալ ներածական մասն ու գլուխները, պաշտոնապես անվավեր ճանաչվեցին գործող կառավարման համակարգի հիմնարար սկզբունքները: Դրանք փոխարինվեցին իրավական պարտադիր ուժ ունեցող հետևյալ սկզբունքներով

- 1) օրենքի գերակայության վրա հիմնված և սոցիալական արդարության սկզբունքներով առաջնորդվող ժողովրդավարական պետություն,
- 2) ժողովրդի ինքնիշխանություն,
- 3) պետական մարմինների գործունեության օրինականություն,
- 4) քաղաքական բազմակարծություն և կուսակցություններ ձևավորելու ազատություն,

<sup>2</sup> **Sarnecki P.**, The Origin and Scope of the Polish Constitution, *The Principles of Basic Institutions of the System of Government in Poland*, eds P. Sarnecki, A. Szmyt, Z. Witkowski, Sejm Publishing Office, Warsaw 1999, p. 13.

5) տեղական ինքնակառավարման միջոցով պետության գործառույթների ապակենտրոնացում,

6) տնտեսական գործունեություն ծավալելու ազատություն,

7) սեփականության իրավունքի լիարժեք պաշտպանություն և սեփականության բոլոր ձևերին հավասար կարգավիճակի շնորհում<sup>3</sup>:

1989 թվականից հետո օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետության սկզբունքը սկսեց դիտարկվել որպես առաջնային սահմանադրական սկզբունք: Ավելին, սահմանադրության մեջ մարդու իրավունքների և մի շարք կարևոր իրավական սկզբունքների բացակայության պարագայում Սահմանադրական դատարանն այդ սկզբունքներից շատերի կիրառման համար հղում էր կատարում օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետության սկզբունքին: Ավելի ուշ որոշ սկզբունքներ տեղ գտան գործող սահմանադրության մեջ:<sup>4</sup>

Թեև վերոնշյալ փոփոխությունների հիմքում հասարակության կողմից հավանության արժանացած ժողովրդավարական արժեքներ էին, սակայն հետագա ընթացքը փաստեց, որ դրանց վրա հիմնված նոր սահմանադրության ընդունումը դյուրին գործ չէ: Մի քանի փորձ արվեց սահմանադրության ընդունման ուղղությամբ:<sup>5</sup>

Առաջին փորձը 1989-1991 թվականներին արեցին Սեյմը և Սենատը: Խորհրդարանի երկու պալատները ձևավորեցին սահմանադրական հանձնաժողովներ, յուրաքանչյուր պալատ մշակեց սահմանադրության իր նախագիծը: Կուսակցությունները և անհատները, մասնավորապես՝ սահմանադրականության ոլորտի փորձագետները, ևս մշակեցին սահմանադրության նախագծեր: Ընդհանուր առմամբ, ներկայացվեց սահմանադրության տասը նախագիծ: Կարճ ժամանակում սահմանադրության ընդունման հավանականությունը ի չիք դարձավ, քանզի ակնհայտ էր, որ ոչ լիարժեք ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով ընտրված խորհրդարանը (այսպես

<sup>3</sup> Sarnecki P.,..., pp. 14-15:

<sup>4</sup> Tuleja P., Introduction ..., p. 9.

<sup>5</sup> Działocha D., A New Constitution for the Republic of Poland. A Legislative History, *The Principles of Basic Institutions of the System of Government in Poland*, eds P. Sarnecki, A. Szmyt, Z. Witkowski, Sejm Publishing Office, Warsaw 1999, pp. 5-8.

կոչված «պայմանագրային Մեյնը»՝ հիմնված «կլոր սեղան» համաձայնության վրա) չի կարող ընդունել նոր սահմանադրություն:

Սահմանադրության ընդունման ուղղությամբ երկրորդ փորձն 1991 թվականի հոկտեմբերին արեց ազատ ընտրությունների ճանապարհով ընտրված խորհրդարանը: Վերջինիս ընդունած Սահմանադրական ակտի (1992 թվականի ապրիլի 23) հիման վրա պետք է ընդունվեր երկրի սահմանադրությունը: Նախատեսվում էր ժողովրդա-վարական և համալիր ընթացակարգ սահմանադրության մշակման և ընդունման համար: Երկպալատ խորհրդարանի կողմից նշանակված Սահմանադրական հանձնաժողովն իր աշխատանքները սկսեց 1992 թվականի հունվարին՝ Սահմանադրական ակտի հիման վրա: Հանձնա-ժողովի ստեղծմանը հաջորդած վեցամսյա ժամկետում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվեց սահմանադրության յոթ նախագիծ: Այդուհանդերձ, սահմանադրության ուղղությամբ աշխատանքների մեկնարկից կարճ ժամանակ անց՝ 1993 թվականի մայիսին, նախագահ Լեյա Վալենսան լուծարեց խորհրդարանը, երբ Մեյնն անվստահություն հայտնեց Հ. Սուխոցկայի գլխավորած կառավարությանը:

Նոր սահմանադրության ընդունման ուղղությամբ երրորդ փորձն արվեց 1993 թվականի սեպտեմբերի 19-ին անցկացված խորհրդարանական ընտրություններից հետո, որում հաղթանակ տարավ ձախակողմյան կուսակցությունը: Այդուհանդերձ, այս անգամ ևս կար խորհրդարանի քաղաքական լեգիտիմության խնդիր: Խորհրդարանում կուսակցությունների ներկայացված լինելու համար սահմանված 5 տոկոսի սահմանագիծը (դաշինքի դեպքում՝ 8 տոկոսի) անսպասելի իրավիճակ ստեղծեց: Մի շարք աջակողմյան կուսակցություններ չհաղթահարեցին այդ սահմանագիծը, ինչի հետևանքով դրանց հարող գրեթե 35 տոկոս ընտրազանգվածը չներկայացվեց խորհրդարանում:<sup>6</sup> Արդյունքում, աջակողմյան կուսակցությունները բարձրացրեցին այն հարցը, որ նորընտիր խորհրդարանը, չնայած օրինական ընտրություններին, չունի նոր սահմանադրություն ընդունելու

<sup>6</sup> **Jasiewicz P.**, Dead Ends and New Beginnings: the Quest for a Procedural Republic of Poland, *Communist and Post-Communist Studies*, 2000, 1, 101-109.

«բարոյական լեզվախմբություն»։ Ի պատասխան ստեղծված իրավիճակի՝ սահմանադրության ուղղությամբ աշխատելու ընթացակարգը սահմանող Ակտում մտցվեցին որոշ փոփոխություններ (օրինակ, քաղաքացիների՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքը)։ Դրա հիման վրա «Համերաշխություն» արհմիությունը Ազգային ժողովի քննարկմանը ներկայացրեց սահմանադրության նախագիծ, որին սատարում էր գրեթե մեկ միլիոն մարդ։ Ազգային ժողովի Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքները կենտրոնացած էին յոթ սահմանադրական նախագծերից վեցի վրա, որոնք ներկայացվել էին դեռևս նախորդ գումարման խորհրդարանին։ Բոլոր նախագծերը դրանց հեղինակները ներկայացրեցին Սահմանադրական հանձնաժողովին։ 1994 թվականի սեպտեմբերին այդ նախագծերը դրվեցին ԱԺ-ի քննարկմանը (առաջին ընթերցում), այնուհետև, Սահմանադրական հանձնաժողովին հանձնարարվեց մշակել մեկ միասնական սահմանադրական նախագիծ։ Մեկ ամիս անց Սեյմում քննարկումներ անցկացվեցին Սահմանադրական հանձնաժողովի առաջարկած կառավարման համակարգին առնչվող հիմնարար հարցերի շուրջ։

Սահմանադրական նախագծերի երկու քննարկումների և Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքների արդյունքում երևան եկան 1989 թվականից հետո անցկացված բոլոր սահմանադրական քննարկումներին բնորոշ հակասությունները, ինչպես նաև ակնառու դարձան առանձին սահմանադրական նախագծերի միջև եղած տարբերությունները։ Չնայած միասնական սահմանադրական նախագծի շուրջ աշխատանքների բազմաթիվ ձախողումների՝ գործընթացն ի վերջո հաջողությամբ ավարտվեց երեքամյա ժամկետում։ 1997 թվականի հունվարին մեկնարկած բանակցությունների արդյունքում, որին մասնակցում էին Չախակողմյան ժողովրդավարական դաշինքը, Լեհաստանի ժողովրդական կուսակցությունը, Ազատություն միությունը և Աշխատավորական միությունը, փոխադարձ զիջումների ճանապարհով հստակեցվեցին սահմանադրական փոփոխությունների ձևակերպումները։ Դրան նպաստեց նաև Հանձնաժողովում ընթացող աշխատանքների ճգնաժամային իրավիճակով մտահոգված Լեհաստանի Հանրապետության նախագահ

Ալեքսանդր Կվասնեսկու՝ Սահմանադրական հանձնաժողովին ուղղված կոչը: Փոփոխությունների ծրագրում հաշվի էր առնված հանրային դպրոցներում անվճար հիմունքներով կրթության տրամադրման և հիմնական առողջապահական ծառայությունների մատուցման ավելի լայն շրջանակների սահմանման (խնդիրը բարձրաձայնել էր Աշխատավորական կուսակցությունը), ինչպես նաև սահմանադրության մեջ տեղական ինքնակառավարման եռամակարդակ կառուցվածքի և տարածքային բաժանման վերաբերյալ հարցերը չլուծված թողնելու վերաբերյալ առաջարկությունները: Ներակայացվեց նաև մասնավոր գյուղացիական տնտեսության հայեցակարգը՝ որպես գյուղատնտեսության հիմք (Լեհաստանի ժողովրդական կուսակցության առաջարկության հիման վրա), ինչպես նաև Սեյմում ձայների երեք հինգերորդ մեծամասնությամբ (ի սկզբանե նախատեսված ձայների երկու երրորդի փոխարեն) նախագահական վետոն հաղթահարելու իրավունքը:

Սահմանադրական հանձնաժողովում ներկայացված ընդդիմադիր թևը որդեգրել էր այլ դիրքորոշում: «Համերաշխություն» արհմիության մշակած սահմանադրական նախագծի (այն բնորոշվում էր որպես «քաղաքացիների նախագիծ») և մշակվել էր ի հակադրություն Սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած նախագծին՝ չնայած վերջինս այլ նախագծերի հետ փաստացի դիտարկվում էր միևնույն հարթության վրա) ներկայացուցիչը առաջարկեց, որ Հանձնաժողովում ներկայացված նախագծերի բոլոր դրույթները քվեարկության դրվեն և փոխարինվեն «Համերաշխության» ներակայացրած նախագծի համապատասխան դրույթներով: Առաջարկը մերժվեց, և արդյունքում Սահմանադրական հանձնաժողովի նախագծի կոնկրետ դրույթների առնչությամբ Արհմիությունը ներկայացրեց 19 կետից բաղկացած փոփոխությունների ծրագիր: 1997 թվականի հունվարի 14-16-ը Սահմանադրական հանձնաժողովում անցկացված քննարկումների և վերոնշյալ փոփոխությունները քվեարկության դնելու արդյունքում «Համերաշխության» առաջ քաշած փոփոխությունների զգալի մասը մերժվեց: Ընդունվեց ամբողջատիրական բնույթի կուսակցությունների և միությունների գոյությունն արգելող օրինագիծ (գործող սահմանադրության 13-րդ հոդված): Առաջարկվեց քաղաքացիների

պարտականությունները սահմանող ցանկում ներառել համընդհանուր բարօրության համար մտահոգվելու պարտականությունը, ինչպես նաև վերաձևակերպել ընտանիքի ինստիտուտին առնչվող սոցիալական և տնտեսական ոլորտի դրույթները: Չախակողմյան ժողովրդավարական դաշինքի, Լեհաստանի ժողովրդական կուսակցության, Ազատություն միության և Աշխատավորական միության կողմից ներկայացված բոլոր վերոնշյալ առաջարկություններն ընդունվեցին:

Ազգային ժողովի 1997 թվականի փետրվարի 24-28-ի նիստերի ընթացքում քննարկվեց սահմանադրության նախագծի վերաբերյալ Մահմանադրական հանձնաժողովի պատրաստած զեկույցը (նախագծի երկրորդ ընթերցում): Քննարկումների արդյունքում առաջարկվեց 400 կետից բաղկացած սահմանադրական փոփոխությունների ծրագիր: Դրանք հիմնականում առնչվում էին այն հարցերին որոնք առավել վիճահարույց էին Մահմանադրական հանձնաժողովի աշխատանքների ընթացքում, այդ թվում՝ սահմանադրության նախաբան, կրոնի ազատություն և դրա կապը պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների շրջանակի հետ, կրթության իրավունք և այլ սոցիալական իրավունքներ, պետական ֆինանսներ, ինչպես նաև մի կողմից միջազգային և հանրային իրավունքի, մյուս կողմից՝ ներպետական իրավունքի փոխհարաբերություններ: Մահմանադրական հանձնաժողովում քննարկված բոլոր փոփոխություններից ընդունվեցին 118-ը:

Հանձնաժողովի աշխատանքի արդյունքները ներկայացվեցին 1997 թվականի մարտի 21-ին և 22-ին ԱԺ-ի պատրաստած լրացուցիչ զեկույցով: Առաջարկվող փոփոխությունները դրվեցին քվեարկության և ընդունվեցին ձայների երկու երրորդ մեծամասնությամբ, որից հետո ԱԺ-ն ընդունեց սահմանադրության ամբողջական նախագիծը: Մահմանադրության ընդունման ընթացակարգերի վերաբերյալ գործող Մահմանադրական ակտի հիման վրա նախագծի երկրորդ ընթերցման ժամանակ երկրի նախագահը ներկայացրեց 41 կետից բաղկացած փոփոխությունների փաթեթ: Մահմանադրական հանձնաժողովը քննարկեց դրանք և որոշ առաջարկություններ հավանության արժանացրեց:

ԱԺ-ում սահմանադրության նախագծի երրորդ ընթերցումը կայացավ 1997 թվականի ապրիլի 2-ին: Քննարկվեց Հանրապետության



նախագահի առաջարկած սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ Սահմանադրական հանձնաժողովի պատրաստած զեկույցը: ԱԺ-ը կողմ քվեարկեց այդ փոփոխությունների զգալի մասին, որոնց հավանություն էր տվել նաև Սահմանադրական հանձնաժողովը: Քվեարկության արդյունքներով գրանցվեց սահմանադրությանը կողմ 451 (497-ից), դեմ՝ 40, ձեռնպահ՝ 6 ձայն: Քվեարկության վերջին փուլից հետո Լեհաստանի Հանրապետության նախագահը, ԱԺ-ի նախագահը, ինչպես նաև գործող հիմնական խորհրդարանական կուսակցությունների նախագահները սահմանադրությունը բնորոշեցին որպես արդյունավետ փոխզիջում և հիմնական իրավական փաստաթուղթ, որում հաշվի են առնված ժամանակակից սահմանադրական տեսության համընդհանուր միտումները և լեհ ժողովրդի որդեգրած հիմնական արժեքները:

Հանրապետության նախագահը հայտարարեց 1997 թվականի մայիսի 25-ին համաժողովրդական հանրաքվե անցկացնելու մասին, ինչը կարճ ժամանակ անց հաստատվեց համապատասխան հրամանագրով: Հանրաքվեից առաջ մեկնարկած քարոզարշավին բնորոշ էին խորհրդարանում ներկայացված կուսակցությունների և արտախորհրդարանական ընդդիմադիր ուժերի (մասնավորապես՝ «Համերաշխություն» կուսակցություն և Լեհաստանի վերակառուցման շարժումը, որն առաջնորդում էր նախկին վարչապետ Յան Օլշևսկին) բացահայտ բևեռացումը, ինչպես նաև սահմանադրության հակառակորդների սուր քննադատությունները, որոնք մեծապես հրահրում էր Հռոմի կաթոլիկ եկեղեցին: Նրանց կոշտ դիրքորոշումը միշտ չէ, որ բավարար չափով հիմնավորված էր: Հիմնական առարկությունները կապված էին ազգի ինքնիշխան իրավունքների օտարման (հոդված 90), բնական իրավունքի՝ որպես պետության իրավական համակարգի հիմքի, մերժման, ինչպես նաև սեփական համոզմունքների հիման վրա երեխային դաստիարակելու ծնողի իրավունքների սահմանափակման հետ:

1995 թվականի հունիսի 29-ի Ակտի հիման վրա 1997 թվականի մայիսի 25-ին անցկացված սահմանադրական հանրաքվեի արդյունքները հրապարակվեցին Ազգային ընտրական հանձնաժողովի՝ հանրաքվեի վերաբերյալ հայտարարությամբ: Հանրաքվեին մասնակ-

ցության ցուցանիշը կազմեց քվեարկության իրավունք ունեցողների 28,324,965 ձայների 42.68 տոկոսը, որից վավեր ճանաչվեց 12,139,790-ը (անվավեր՝ 1068-ը): Արձանագրվեց սահմանադրությանը կողմ քվեարկած 6,398,316 ձայն (կամ 52.71 տոկոս), դեմ՝ 5,571,439 (45.89 տոկոս): Հանրաքվեի դեմ ուղղված բոլոր բողոքները քննարկելուց հետո Գերագույն դատարանը հաստատեց սահմանադրական հանրաքվեի օրինականությունը:

Լեհաստանի Հանրապետության սահմանադրությունը ուժի մեջ մտավ 1997 թվականի հոկտեմբերի 17-ին (հռչակմանը հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո): 236(2)-րդ և 237(1)-րդ հոդվածներում սահմանված որոշ դրույթներ ուժի մեջ մտան ավելի ուշ:<sup>7</sup>

### **Լեհաստանի Հանրապետության սահմանադրության ընդհանուր բնութագիրը**

Լեհաստանի սահմանադրությունը բնորոշվում է որպես «փոխզիջումային սահմանադրություն»<sup>8</sup>: Մեկ փաստաթղթում պետք է միաժամանակ հաշվի առնվեին մինչև 1993 թվականը և դրանից հետո Սահմանադրական հանձնաժողովին ներկայացված մի քանի մրցող նախագծեր, ինչպես նաև «Համերաշխության» առաջ քաշած «քաղաքացիների սահմանադրության» նախագիծը: Լեհաստանում տրանսֆորմացիայի խաղաղ ընթացքը հնարավոր դարձրեց ընդհատված և

<sup>7</sup> The Constitution of the Republic of Poland of 2<sup>nd</sup> April 1997, *Polish Constitutional Law...*, p. 19.

<sup>8</sup> **Tomaszewski W.**, *Kompromis polityczny w procesie stanowienia Konstytucji Rzeczypospolitej Polskiej z kwietnia 1997 roku* [Political Compromise in Process of Writing the Constitution of the Republic of Poland], Akademia Humanistyczna im. Aleksandra Gieysztor, Pułtusk 2007, p. 130. Comp. J. Jaskiernia, *Wpływ kompromisu leżącego u podstaw Konstytucji RP na jej percepcję i propozycje zmian w latach 1997-2007* [Influence of Compromise based upon the Constitution of the Republic of Poland on its Perception and Proposals of Change 1997-2007], *Porządek konstytucyjny w Polsce* [Constitutional Order in Poland], eds W. Jakubowski, T. Słomka, Oficyna Wydawnicza ASPRA-JR, Warszawa-Pułtusk 2008, p. 173.

շարունակական էլեմենտների համակեցությունը<sup>9</sup>: Բոլոր ներկայացված նախագծերին բնորոշ էր կառավարման հանրապետական ձևի, օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետության, ազգի՝ որպես ինքնիշխան միավորի, քաղաքական բազմակարծության, իշխանության թևերի տարանջատման և հավասարակշռության, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական իրավունքների ու ազատությունների ծավալուն ցանկի և դրանց պաշտպանության արդյունավետ մեխանիզմների վկայակոչումը<sup>10</sup>։ Հիմնական հակասությունները ծավալվում էին այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են հասարակության և պետության կազմակերպման և գործունեության հիմքում ընկած արժեհամակարգը, խորհրդարանի կառուցվածքը (միապալատ, թե երկպալատ) և այլն։ Խորը անհամաձայնություն կար նաև ժողովրդավարական պետությունում Հռոմի կաթոլիկ եկեղեցու տեղի ու գործունեության, տնտեսական և սոցիալական իրավունքների բնույթի ու շրջանակների, ինչպես նաև այսպես կոչված «եվրոպական պահանջների» վերաբերյալ, ինչը հնարավոր կդարձներ ներպետական որոշ լիազորությունների փոխանցումը միջպետական մարմիններին<sup>11</sup>։

Սահմանադրության շուրջ վերջնական փոխզիջմանը պետք է նախորդեին մի շարք խորհրդարանական փոխզիջումներ։ Դրանք էին՝

- 1) ներքին փոխզիջումներ առանձին կուսակցությունների ներսում, քանզի շատ սահմանադրական հարցեր առաջացնում էին ներխորհրդարանական հակասություններ,
- 2) խորհրդարանական կոալիցիա կազմող կուսակցությունների միջև փոխզիջումներ, որը բավական բարդ էր ձեռք բերել,

<sup>9</sup> **Sokolewicz W.**, The New Role of the Constitution in the Post-socialist States of Central and Southeast Europe, *Ten Years of the Democratic Constitutionalism in Central and Eastern Europe*, ed. by K. Działocha, R. Mojak, K. Wójtowicz, Lublin 2001, pp. 17-18.

<sup>10</sup> **Diemer-Benedict T.**, Die neue Verfassung der Republik Polen, *Osteuropa Recht*, 1997, 43, 222-234.

<sup>11</sup> **Wyrzykowski M.**, Introductory Note to the 1997 Constitution of the Republic of Poland, *Constitutional Essays*, M. Wyrzykowski (ed.), Institute of Public Affairs, Warsaw, 1999, p. 12.

3) խորհրդարանական կոալիցիայի և ընդդիմադիր կուսակցությունների միջև փոխզիջումներ, ինչն էլ ի վերջո հանգեցրեց սահմանադրական կոալիցիայի ձևավորմանը:

Այդուհանդերձ, առավել կարևոր փոխզիջում էր սահմանադրական կոալիցիայի կողմից «Համերաշխության» և Հռոմի կաթոլիկ եկեղեցու առաջադրած պահանջների զգալի մասի միակողմանի ընդունումը: Չնայած դրան՝ վերջիններս կտրականապես դեմ էին ԱԺ-ի ընդունած սահմանադրական նախագծին: Այդ ժխտողական դիրքորոշումը մեծապես պայմանավորված էր այն հանգամանքով, որ սահմանադրության հեղինակ քաղաքական ուժերը չէին գտնվում նրանց վերահսկողության տակ: Փոխարենը, այդ դերը ստանձնել էին այն քաղաքական ուժերը, որոնք 1989-1990 թվականների խաղաղ հեղափոխության արդյունքում կորցրեցին իրենց իշխանությունը (կամ միայն այդպես թվաց) և բնավ չէր կարող ենթադրվել, որ դրանք էական դեր կխաղան Լեհաստանի ապագա քաղաքական կյանքում:<sup>12</sup>

Ակնհայտ է, որ իրավունքի տեսության հիմքում ընկած օրենսդրական ռացիոնալության գաղափարները հազվադեպ են լիարժեքորեն կյանքի կոչվում նորմատիվ ակտերի մշակման և ընդունման գործընթացի շրջանակներում, մասնավորապես, երբ լիազումար նիստերին ամբողջ կազմով մասնակցում են խորհրդարանական ուժերը: Նման պայմաններում օրենսդրական գործընթացը մեծապես պայմանավորված է քաղաքական ռացիոնալության նկատառումներով: Վերջինս, իր հերթին, որոշ դեպքերում կարող է խոչընդոտել խելամիտ որոշումների կայացման գործընթացին: Սահմանադրության մշակման և ընդունման գործընթացում զգացմունքների և շահերի, կրոնական և գաղափարական փաստարկների, տնտեսական և արժեքային պատկերացումների համակենտրոնացումը կարող է լինել բավական ծայրահեղ: Դա մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ սահմանադրությունն իրապես իրավական համակարգում հիմնարար նշանակություն ունեցող ակտ է, ինչի արդյունքում հանգեցնում է ավելի ծավալուն քաղաքական բանավեճերի, քան ցանկացած այլ «նորմալ» իրավական ակտ: Ավելին, սահմանադրության մշակման աշխատանքները

<sup>12</sup> Wyrzykowski M., ..., pp. 12-13:

խորհրդարանական կուսակցություններին եզակի հնարավորություն են ընձեռում ներկայացնելու իրենց գաղափարական ինքնությունը, ինչպես նաև ընդգծելու ազգային օրեստորության և պետականության ստեղծման պատմության մեջ ունեցած ուրույն դերը: Սահմանադրության շուրջ բանավեճերը սրվելու միտում ունեն նաև այն պատճառով, որ սահմանադրությունն այնպիսի օրեստորական ակտ է, որը հետագայում բավական բարդ է փոփոխել<sup>13</sup>:

Արժեքային համակարգի տեսության վրա հիմնված սահմանադրական բանավեճերը, որպես կանոն, ծավալվում են արժեքների գոյաբանական կարգավիճակի և դրանց նույնականացման շուրջ: Գրեթե միշտ բախում է առաջանում երկու ծայրահեղ տարբեր մոտեցումների միջև՝ բացարձակ (կամ գիտակցական) և հարաբերական (կամ ոչ գիտակցական)<sup>14</sup>: Գործնականում բախվելով դրանց միջև ընտրության խնդրին՝ երկու հակադիր մոտեցումների կողմնակիցները մեծ մասամբ չեն կարողանում համաձայնության գալ միմյանց հետ: Գրեթե անհնար է ընդհանուր եզրեր գտնել նրանց միջև, ովքեր կարծում են, որ այդ արժեքները, մասնավորապես՝ բարոյական, ունեն օբյեկտիվ բնույթ և ներկայացնում են Աստծո կամքը և նրանց, ովքեր դրանք համարում են լոկ գիտակցության և մշակույթով պայմանավորված ընտրության արդյունք: Բացարձակ մոտեցման կողմնակիցները խորապես համոզված են, որ գոյություն ունի արժեքների կոշտ և կապակցված հիերարխիա: Մինչդեռ հարաբերական մոտեցման կողմնակիցները մերժում են հաստատուն և անվիճելի հիերարխիայի գոյությունը: Լեհաստանի արդի հասարակության շրջանում գոյություն ունեցող և սահմանադրական քննարկումներում արժարժվող այդ երկու մոտեցումներն արտացոլում են արժեքային բազմակարծություն: Վերջինս ազդում է արժեքների և դրանց հիերարխիայի բնույթի վերաբերյալ պատկերացումների վրա<sup>15</sup>:

<sup>13</sup> **Winczorek P.**, The Political Circumstances of the Drafting of the Republic of Poland's Constitution of 2 April 1997, *Constitutional Essays*, M. Wyrzykowski (ed.), Institute of Public Affairs, Warsaw 1999, pp. 15-16.

<sup>14</sup> **Ziemiński Z.**, *Wartości konstytucyjne. Zarys problematyki* [Constitutional Values. An Outline], Sejm Publishing Office, Warszawa 1993, p. 7.

<sup>15</sup> **Winczorek P.**, Axiological Foundations of the Polish Constitution, *Constitutional Essays*, M. Wyrzykowski (ed.), Institute of Public Affairs, Warsaw 1999, pp. 61-62.

Վերոնշյալ նախընտրությունների և արժեքների ամբողջությունը բնորոշում է լեհ հասարակությունը որպես

- 1) ազգային-ավտորիտար՝ հիմքում ունենալով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ազգ, ռասա և իշխանություն,
- 2) ազգային-քրիստոնեական (կաթոլիկ)՝ կրոն, ազգ և ավանդույթ,
- 3) պահպանողական-ավտորիտար՝ մասնավոր սեփականություն, իշխանություն և ավանդույթ,
- 4) պահպանողական-ազատական՝ մասնավոր սեփականություն, ազատություն, ավանդույթ և օրենք,
- 5) քրիստոնեական-ժողովրդավարական՝ զբաղվածություն, մասնավոր սեփականություն, կրոն և օրենքը,
- 6) գյուղատնտեսական՝ զբաղվածություն, մասնավոր սեփականություն, օրենք և ավանդույթ,
- 7) ազատական-ժողովրդավարական՝ մասնավոր սեփականություն, ազատություն, օրենք, հանդուրժողականություն,
- 8) սոցիալական-ազատական՝ մասնավոր սեփականություն, ազատություն, զբաղվածություն, հանդուրժողականություն,
- 9) կոմունիստական՝ հավասարություն, օրենք և իշխանություն,
- 10) անարխիկ՝ ազատություն, հավասարություն և հանդուրժողականություն,
- 11) պոպուլիստական՝ հավասարություն և իշխանություն:

Քիչ հավանական է, որ որևէ կապակցված և համապարփակ արժեհամակարգ իր ողջ շրջանակով ընդունվի սահմանադրության մշակման համար պատասխանատու խորհրդարանական մարմնի կողմից: Լեհաստանը ևս բացառություն չէ: 1989-1996 թվականներին ներկայացված սահմանադրական առաջարկությունների վրա այս կամ այն չափով ազդում էին 2)-9) միջակայքն ընդգրկող վերոնշյալ քաղաքական կողմնորոշումները<sup>16</sup>:

1997 թվականի ապրիլի 2-ի սահմանադրությունը սկզբունքներով և ընդհանուր դրույթներով հարուստ փաստաթուղթ է, որն անկասկած դասվում է այն հիմնական օրենքների շարքին, որոնց հեղինակները ոչ միայն նպատակ ունեին ստեղծել պետական մարմինների և ինստիտուտների համակարգ, այլև այն դարձնել ավելի ընդհանուր

<sup>16</sup> Winczorek P., Axiological ..., pp. 62-63:

բնույթ ունեցող սկզբունքների և արժեքների զարգացած ցանց<sup>17</sup>: Ուստի, սահմանադրության նախաբանում մատնանշված են այնպիսի համընդհանուր արժեքներ, ինչպիսիք են ճշմարտությունը, արդարությունը, բարու և գեղեցիկի մասին պատկերացումները՝ որպես Աստծո նկատմամբ հավատքից սերող արժեքներ: Դրանց մի մասը արտահայտում է արդի ժողովրդավարական պետությանը բնորոշ արժեքներ և գաղափարներ, մյուս մասը՝ լեհական մշակույթի և ժողովրդավարությանն անցման ճանապարհի առանձնահատուկ բնույթը: Ընդհանուր առմամբ դրանք կազմում են պետության սահմանադրական ինքնությունը:<sup>18</sup>

Նոր սահմանադրության մեջ իրականացված առավել արմատական փոփոխություններն՝ ի տարբերություն նախորդի, (այդ թվում՝ 1989 թվականի դեկտեմբերին իրականացված սահմանադրական փոփոխությունները և 1992 թվականի այսպես կոչված «Փոքր Սահմանադրությունը») կապված էին սահմանադրության առաջին գլխի հետ: Ներառվեց այն սկզբունքը, որ «պետությունը պետք է ծառայի իր բոլոր քաղաքացիների բարօրությանը» (հոդված 1): Սահմանադրության մեջ Լեհաստանի պետականությունը բնորոշող առանձնահատկություններից էր նաև պետության միատարրության սկզբունքը՝ ապահովելով պետական իշխանության ապակենտրոնացում, «սոցիալական շուկայական տնտեսություն»՝ որպես պետության տնտեսական համակարգի բնութագրիչ, գյուղատնտեսության ոլորտում մասնավոր տնտեսության պաշտպանություն, ինչպես նաև պետության և եկեղեցու միջև համագործակցության հաստատում՝ հանուն հասարակության բարօրության: Միաժամանակ հռչակվում էր անձնական համոզմունքներին առնչվող հարցերի վերաբերյալ պետության չեզոքության պահպանում: Օրենքի գերակայության հիման վրա կառավարվող ժողովրդավարական պետության սկզբունքն՝

<sup>17</sup> **Balaban A.**, The New Role of the Polish Constitution of 2 April 1997, *Ten Years of the Democratic Constitutionalism in Central and Eastern Europe*, ed. by K. Działocha, R. Mojak, K. Wójtowicz, Lublin 2001, p. 47.

<sup>18</sup> **Garlicki L.**, The Principles of the System of Government in the Republic of Poland, *The Principles of Basic Institutions of the System of Government in Poland*, eds P. Sarnecki, A. Szmyt, Z. Witkowski, Sejm Publishing Office, Warsaw 1999, p. 52.

ընդունված 1989 թվականի դեկտեմբերին, զարգացավ այն ժամանակ, երբ հռչակվեց միջազգային իրավունքի հարգման պահանջը և, որ բոլոր պետական մարմինները սահմանադրությունն ուղղակիորեն պետք է կիրառեն (անկախ այն բանից՝ այդ ոլորտում օրենքները գործում են, թե ոչ)<sup>19</sup>:

Նոր սահմանադրությամբ ամրագրված երկրորդ և հիմնական համալիր փոփոխություններն առնչվում էին քաղաքացիների իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթներին: Դրանց անդրադարձ է կատարված սահմանադրության երկրորդ գլխում, որին, ինչպես առաջին գլխին, բնորոշ է փոփոխությունների իրականացման ավելի բարդ ընթացակարգ և որը հանդիսանում է «Քաղաքացիական իրավունքների վերաբերյալ» գլխի ավելի ընդարձակ տարբերակ՝ իր ուրույն ներքին տրամաբանությամբ: Ակնհայտ է, որ սահմանադրության այդ գլխում անհատի կարգավիճակին առնչվող դրույթներում փորձ է արվել ապահովել առավելագույն համապատասխանություն միջազգային կոնվենցիաների (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի) դրույթներին: Նոր սահմանադրության մեկ այլ կարևոր առանձնահատկություն է միջազգային մարդասիրական իրավունքի նկատմամբ բացությունը, որն ակնհայտորեն բացակայում էր նախորդ՝ Լեհաստանի սոցիալիստական սահմանադրության մեջ: «Քաղաքացիական իրավունքների մասին նոր կանոնադրությամբ» սահմանված իրավունքները հիմնված են անհատի արժանապատվության նկատմամբ հարգանքի վրա, և պետության գործունեությունը նախևառաջ միտված է ոչ թե այդ իրավունքների շրջանակների հստակեցմանը, այլ արժանապատվության նկատմամբ հարգանքի և պաշտպանության ապահովմանը: Սահմանադրության երկրորդ գլխում ներառվեցին նախկինում չարժարժված որոշ քաղաքացիական իրավունքներ, այդ թվում՝ էթնիկ փոքրամասնությունների իրավունքներ, անձնական կյանքի գաղտնիության իրավունք, ծնողների՝ իրենց երեխաներին սեփական համոզմունքների հիման վրա դաստիարակե-

<sup>19</sup> **Sarnecki P.**, The Origin and Scope of the Polish Constitution, *The Principles of Basic Institutions of the System of Government in Poland*, eds. P. Sarnecki, A. Szmyt, Z. Witkowski, Sejm Publishing Office, Warsaw 1999, p. 18.



լու իրավունք, իշխանությունների մասին տեղեկատվության ձեռքբերման իրավունք<sup>20</sup>:

Նոր սահմանադրությամբ հաստատվեցին իշխանությունների տարանջատման սկզբունքը, ինչպես նաև անցումը խորհրդարանական համակարգին, որոնք արժարժվել էին դեռևս 1989 թվականին (դեկտեմբերին իրականացված սահմանադրական փոփոխություններ) և 1992 թվականին («Փոքր սահմանադրություն»): Սահմանադրության մեջ ընդգծվում էր դատական իշխանության՝ որպես «իշխանության երրորդ թևի» կարևորությունը: Դա սերտորեն կապված էր քաղաքացիական իրավունքների շրջանակի հետ, քանզի նոր սահմանադրության մեջ առաձևահատուկ ուշադրություն էր դարձված դրանց երաշխավորման հարցին, որի վճռորոշ նախադրյալներից է արդարադատության անկախ իրականացման սկզբունքը: Վերջինս ենթադրում է դատական գործի լսման համընդհանուր իրավունք՝ որպես քաղաքացիական իրավունք, առնվազն առաջին և երկրորդ աստիճանի դատարանների ներգրավում, սահմանադրական բողոք ներկայացնելու քաղաքացիների իրավունք, Սահմանադրական դատարանի կայացրած վճիռների անբեկանելի բնույթ, Սահմանադրական դատարանին ներգրավելու բոլոր դատարանների իրավունք՝ վերջիններիս կողմից առանձին դեպքերում կիրառվող օրենսդրական ակտերի սահմանադրականության հետ կապված խնդիրների լուծման համար: Ավելին, արձանագրվել է զգալի առաջընթաց դատավորների անկախության երաշխավորման ուղղությամբ, և այդ համատեքստում նաև Արդարադատության ազգային խորհրդին վերաբերող դրույթների ընդլայնում՝ որպես այդ անկախության պահպանման երաշխիք:<sup>21</sup>

Սահմանադրական դատարանի կառուցվածքը և ընթացակարգը սահմանված են Սահմանադրական դատարանի վերաբերյալ օգոստոսի 1-ի իրավական ակտով: Ակտի առաջին հոդվածը, անդրադառնալով սահմանադրության 188-րդ հոդվածին, նշում է, որ սահմանադրական դատարանի՝ որպես դատական իշխանության, հիմնական գործառույթը նորմատիվ ակտերի և միջազգային համաձայ-

<sup>20</sup> Sarnecki P., ..., pp. 19-20:

<sup>21</sup> Sarnecki P., ..., p. 20, Sadurski W., Allegro without Vivaldi: Trademark Protection, Freedom of Speech, and the Constitutional Balancing, *European Constitutional Law Review*, 2012, 3, 454-469.

նագրերի սահմանադրականության վերահսկումն է, ինչպես նաև սահմանադրությամբ սահմանված մի շարք այլ գործառույթների իրականացումը: Սահմանադրական դատարանը բնորոշվում է որպես «բացասական օրենսդիր», և, անկասկած, նրա գործունեությունն ուղղակիորեն ազդում է կառավարման քաղաքական գործընթացի վրա: Սահմանադրական վերահսկման լեհական մոդելը հիմնված է գործող եվրոպական մոդելների, մասնավորապես՝ Ավստրիայի սահմանադրական դատարանի մոդելի վրա: Սահմանադրությանն օրենքների համապատասխանության դատական վերահսկումը մայր օրենքի պահպանման գլխավոր երաշխիքներից է արդի ժողովրդավարական պետություններում:<sup>22</sup>

### **Լեհաստանի սահմանադրության վրա եվրոպական ժողովրդավարական չափանիշների ազդեցությունը**

Սահմանադրության վրա եվրոպական ժողովրդավարական չափանիշների ազդեցության տեսանկյունից Լեհաստանում ստեղծված իրավիճակը տարբերվում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներից<sup>23</sup>, մասնավորապես՝ նախկին Խորհրդային Միության տարածքի երկրներից: Ժողովրդավարացման գործընթացի սկզբում Լեհաստանում արդեն գործում էին եվրոպական ժողովրդավարական չափանիշներին բավարարող մի քանի ժողովրդավարական հաստատություններ, այդ թվում՝ Սահմանադրական դատարան, ազգային դատարան, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, վարչական դատարաններ: Ձևավորված նոր քաղաքական մթնոլորտի պայմաններում այդ հաստատությունները կարողացան ամրապնդել իրենց դիրքերը, մասնավորապես՝ իշխանությունների տարանջաման և քաղաքական բազմակարծության շրջանակներում: Այդուհան-

<sup>22</sup> **Dana A.**, *Constitutional Review – Distribution of the Burden of Proof*, “Volumina Scientiala Scholae Superioris de Disciplina Informatica in Rebus Gubernandis ac Administrandis”, 2014, No. 3, p. 83.

<sup>23</sup> **Pridham G.**, The international dimension of democratization: theory, practice, and inter-regional comparisons, *Building Democracy. The International Dimension of Democratisation in Eastern Europe*, ed. by G. Pridham, E. Herring, G. Sanfors, London-Washington 1997, p. 7.

դերձ, Լեհաստանը չէր պատկանում այն երկրների թվին, որտեղ ինստիտուցիոնալ առաջընթացը մեծ չափով միջազգային կազմակերպությունների, հատկապես՝ ԵՄ, ներգործության արդյունք էր:

Լեհաստանի՝ Եվրոպայի խորհրդին անդամակցության դիմումի վերաբերյալ Ջ. Ֆինսբերգի պատրաստած զեկույցում<sup>24</sup> նշվում էր, որ 1989 թվականի ապրիլի 7-ի սահմանադրական փոփոխությունների շուրջ «կլոր սեղան» քննարկման արդյունքում ներկայացվեցին Եվրոպայի խորհրդի արժեհամակարգում ընկած երկու հիմնարար արժեքներ՝ իշխանությունների տարանջատում և քաղաքական բազմակարծություն: Ընդգծվում էր մեկ այլ կարևոր արժեք ևս, այն է՝ դատական իշխանության և դատավորների անկախության երաշխավորումը<sup>25</sup>:

Ջեկույցում մատնանշվում էին նաև Եվրոպայի խորհրդին անդամակցության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող մի շարք փոփոխություններ, այդ թվում՝ ազատ աշխատաշուկայի ստեղծում, քաղաքական միավորումների և կուսակցությունների ազատություն, խղճի և կրոնի ազատությունը երաշխավորող օրենք (մայիսի 17, 1989 թվական), մամուլի գրաքննությունն արգելող օրենք (մայիսի 29, 1989 թվական), հավասարություն հիմնված օրենքի վրա, անկախ ինքնակառավարման համակարգի երաշխավորում (մարտի 8, 1990 թվական)<sup>26</sup>:

Եվրոպայի խորհրդին Լեհաստանի անդամակցությունը խոչընդոտող միակ գործոնը ազատ ընտրությունների անցկացման խնդիրն էր: Անկասկած Լեհաստանում 1989 թվականի հունիսի 4-ին անցկացված ընտրություններն ունեցան վճռորոշ նշանակություն և ձևավորեցին նոր քաղաքական իրավիճակ՝ ազդելով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ընթացող զարգացումների վրա: Սակայն պաշտոնական տեսանկյունից Եվրոպայի խորհուրդն այդ ընտրությունները չէր կարող դիտարկել որպես «ազատ և

<sup>24</sup> *Report of Poland's application for membership of the Council of Europe* (Rapporteur: Sir Geoffrey Finsberg, United Kingdom, Conservative), Parliamentary Assembly of the Council of Europe, Strasbourg – 19 September 1990, Doc. 6289),

p. 2.

<sup>25</sup> *Report of...*, p. 3:

<sup>26</sup> *Report of...*, p. 3-6:

ժողովրդավարական», քանզի Սեյմի տեղերի ընդամենը մեկ երրորդն էր ազատ մրցակցային («կլոր սեղան» քննարկման արդյունքում), և միայն Սենատի կազմն ընտրվեց ազատ հիմունքներով: Ֆինսերբիզ գեկույցում ընդգծվում էր ազատ ընտրությունների անցկացման վճռորոշ նշանակությունը: ԵԽ-ի Խորհրդարանական վեհաժողովն ուղղակիորեն նշեց, որ Լեհաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ Վեհաժողովի բյուրոն տեղեկացնի Վեհաժողովի նախագահին, որ բավարարված է Լեհաստանում անցկացված ազատ ընտրությունների արդյունքներով<sup>27</sup>: Համանման որոշում կայացրեց նաև ԵԽ-ի նախարարների կոմիտեն<sup>28</sup>:

1991 թվականի հոկտեմբերին անցկացված ազատ ժողովրդավարական ընտրություններից հետո Լեհաստանը դարձավ ԵԽ-ի անդամ (1991 թվականի նոյեմբերի 27): Նույն օրը Լեհաստանը ստորագրեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը վավերացվեց 1992 թվականի դեկտեմբերի 15-ին և ուժի մեջ մտավ 1993 թվականի հունվարի 19-ին:

Լեհաստանի սահմանադրական զարգացումների վրա ԵԽ-ի ազդեցությունը հատկապես ակնառու էր սահմանադրական իրավունքների և ազատությունների ոլորտում, քանզի դրանց առնչվող մի շարք հոդվածներ գրեթե ուղղակիորեն փոխառվեցին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից: Որպես «փափուկ օրենք» որակվող չափանիշները ևս ունեցան կարևոր նշանակություն, մասնավորապես՝ դատական իշխանության իրականացման գործընթացում (օրինակ՝ դատավորների կարգավիճակ):

ԵԽ-ի ազդեցությունը Լեհաստանում այնքան մեծ չէր, որքան, օրինակ, Ռուսաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում, Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում<sup>29</sup>: Լեհաստանը հասցրել էր ձևավորել մի շարք ժողովրդավարական հաստատություններ

<sup>27</sup> Opinion No. 154 (1990)

<sup>28</sup> Resolution (90) 18.

<sup>29</sup> **Jaskiernia J.**, Влияние Совета Европы на системные изменения в государствах бывшего Советского Союза, *Problemy konstytucjonalizma i jego sudebnoj zaszczyty w gosudarstwach wostocznoj Jewropy*, *Studia Politologiczne*, vol. 32, 2014, p. 11

ներպետական սահմանադրական իրավունքի շրջանակներում (մի մասը դեռևս խորհրդային ժամանակաշրջանում), ուստի այդ գործում ԵՄ-ի ազդեցությունը զգալի չէր: Երկիրը սեփական նախաձեռնությամբ հաստատել էր նաև կառավարման ժողովրդավարական համակարգ (իշխանությունների տարանջատում, քաղաքական բազմակարծություն, դատական իշխանության անկախություն, տեղական ինքնակառավարում): Անկասկած, ԵՄ-ի գործադրած ճնշումն ազատ ընտրություններ անցկացնելու ուղղությամբ 1991 թվականի հոկտեմբերի ընտրությունների կարևոր խթաններից էր (հատկանշական է, որ այսպես կոչված «պայմանագրային խորհրդարանի» ժամկետը պետք է լրանար 1993 թվականին): ԵՄ-ի առաջադրած չափանիշները («փափուկ օրենք») ակնհայտ դեր խաղացին սահմանադրության մշակման, մասնավորապես՝ իրավունքների և ազատությունների ձևակերպման գործում:

Լեհաստանում ընթացող սահմանադրական գործընթացների վրա Եվրոպական միության ազդեցությունը շատ ավելի սահմանափակ էր<sup>30</sup>: ԵՄ-ի ընդլայնումը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ուղղությամբ մայրցամաքի վերաինտեգրման վերջին փորձն էր՝ պարտադրված մասնատումից գրեթե կես դար անց<sup>31</sup>: Կարելի է պնդել, որ ԵՄ-ի հիմքում ընկած եվրոպական ժողովրդավարական չափանիշների կիրառման արդյունքում երկիրը գործնականում կյանքի կոչեց նաև ԵՄ-ի ակնկալիքներն այդ ոլորտում<sup>32</sup>: ԵՄ-ի սահմանած «ժողովրդավարական պայմանականության»<sup>33</sup> սկզբունքը Լեհաստանի դեպքում այդքան էական չէր, որքան անդամակցության թեկնածու այլ

<sup>30</sup> **Jaskiernia J.**, Fünf Jahre Mitgliedschaft der Republik Polen in der Europäischen Union. Umgestaltungen des polnischen Rechtssystems und des Bewusstseins der Bevölkerung, *Deutsch-Polnische Juristen-Zeitschrift*, 2009, 2, 5-19.

<sup>31</sup> **Mayhew A.**, *Recreating Europe, The European Union's Policy towards Central and Eastern Europe*, Cambridge 1998, p. xiii.

<sup>32</sup> **Pridham G.**, EU Enlargement and Consolidating Democracy in Post-Communist States: Formality and Reality, *Journal of Common Market Studies*, 2002, 5, 942-958.

<sup>33</sup> **Williams A.**, Enlargement of the Union and the Human Rights Conditionality, *European Law Review*, 2000, 6, 610-623.

երկրների դեպքում<sup>34</sup>: Լեհաստանի նոր սահմանադրության մեջ տեղ գտան այնպիսի դրույթներ, որոնք նախադրյալներ էին ստեղծում Եվրոպական միությանն ապագա անդամակցության համար: Անկասկած, Լեհաստանի ինտեգրումն այդ կառույցին մեծ ազդեցություն ունեցավ հանրային իշխանությունների կազմակերպման և գործունեության բնույթի վրա<sup>35</sup>: Անդամակցության նախնական փուլի ժամանակ Լեհաստանի խորհրդարանը ներկայացրեց երկրի ներպետական իրավունքը ԵՄ-ի իրավունքին ներդաշնակեցման ընթացակարգ<sup>36</sup>: Գրեթե նույն ժամանակ Լեհաստանը նախաձեռնեց մի շարք փոփոխություններ հանրային իրավունքի ոլորտում<sup>37</sup> և խորհրդարանական աշխատանքների ռացիոնալացման ուղղությամբ<sup>38</sup>: Նիցցայի համաձայնագիրը Եվրամիությանը նախապատրաստեց 2004 թվականին մեկնարկած խոշոր տարածքային ընդլայնմանը<sup>39</sup>: Լեհաստանի սահմանադրական դատարանը սահմանեց Նիցցայի համաձայնագրի և Լեհաստանի սահմանադրության համապատասխանությունը<sup>40</sup>: Հարկ է նկատել, որ Համաձայնագրի 7-րդ հոդվածում ներառված մեխանիզմի<sup>41</sup> կիրառումը չի սպառնում Լեհաստանին,

<sup>34</sup> **Schimmelfenning F., Engert S., Knobel H.**, Cost, Commitment and Compliance: the Impact of EU Democratic Conditionality on Latvia, Slovakia and Turkey, *Journal of Common Market Studies*, 2003, 3, 497-516.

<sup>35</sup> **Biernat S.**, The Impact of European Integration on the Organization and Functioning of Poland's Legislative and Executive Authorities, *Revue européenne de droit public. Revue quadrilingue*, 1997, 4, 1182-1197.

<sup>36</sup> **Jaskiernia J.**, Polish Sejm's Procedure for Approximating Polish Law to the Law of the European Union, *Contemporary Polish Law*, 2000=2001, p. 63.

<sup>37</sup> **Łętowski J.**, Polish Public law in the Face of European Integration, *The National Constitution and European Integration*, ed. by E. Popławska, Warsaw 1995, p. 54.

<sup>38</sup> **Jaskiernia J.**, The Regulation of the Procedure as a Means of Rationalizing the Work of Parliament, *The National Constitution and European Integration*, ed. by E. Popławska, Warsaw 1995, p. 115.

<sup>39</sup> **Jaskiernia J.**, Political and Institutional Problems of the European Union's Political System in the Post-Nice Process, *The Treaty of Nice. Conclusions for Poland*, ed. by J. Barcz, R. Kuźniar, H. Machińska, M. Popowski, Warsaw 2002, p. 66.

<sup>40</sup> **Łazowski A.**, Accession Treaty: Polish Constitutional Tribunal. Conformity of the Accession Treaty with the Polish Constitution. Decision of 11 May 2005, *European Constitutional Law Review*, 2007, 1, 142-156.

<sup>41</sup> **Richardson J.**, The European Union in the World: a Community of Values, *Fordham International Law Review*, 2002, 1, 6-19.

քանզի քիչ հավանական է, որ վերջինս կխախտի ԵՄ-ի հիմքում ընկած ժողովրդավարական սկզբունքները (այս մեխանիզմը ԵՄ-ն օգտագործեց Ավստրիայի դեմ, երբ Ջ. Հայդերի այլատյաց կուսակցությունը միացավ կառավարությանը): Մահմանադրության մեջ Լեհաստանը պետք է ներառեր այսպես կոչված «Եվրոպական դրույթներ»՝ որպես ԵՄ-ին երկրի անդամակցության արդյունք<sup>42</sup>: Այդ ուղղությամբ արված մի շարք փորձեր անհաջողության են մատնվել<sup>43</sup>:

Անդրադառնալով Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) անդամակցությամբ ստանձնած պարտավորություններին՝ հարկ է նկատել, որ այդ կազմակերպությունը կարևոր դեր է խաղացել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում խորհրդային համակարգի թուլացման գործում՝ հիմնվելով 1975 թվականի օգոստոսի 1-ի Հելսինկյան եզրափակիչ ակտում ներառված այսպես կոչված «երրորդ զամբյուղի» մեխանիզմի վրա: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում տեղի ունեցած կտրուկ քաղաքական փոփոխություններից հետո այս կազմակերպության նշանակությունը հավասարեցվեց խորհրդային ժամանակաշրջանի մակարդակի: Փաստացի անհատի կարգավիճակի վերաբերյալ ԵԱՀԿ-ի սահմանած պարտավորությունների<sup>44</sup> հիմքում գրեթե այն նույն արժեքներն են, որոնք ներկայացնում է ԵԽ-ը: Ուստի, այդ առումով դրանք լուրջ ազդեցություն չունեցան Լեհաստանի սահմանադրական գործընթացների վրա: Մինևույն ժամանակ հարկ է փաստել, որ ԵԱՀԿ-ը կարևոր դեր խաղաց ընտրությունների մշտադիտարկման գործընթացում<sup>45</sup>: 2007 թվականին ԵԱՀԿ-ը

<sup>42</sup> **Jaskiernia J.**, *Członkostwo Polski w Unii Europejskiej a problem nowelizacji Konstytucji RP* [Membership of Poland in the European Union and the Problem of Changing of the Constitution of the Republic of Poland], „Żurawia Papers, z. 2, Warszawa, 2004, p. 61.

<sup>43</sup> **Safjan M.**, The Constitution and the Membership of the Republic of Poland in the European Union, *Contemporary Polish Law, 2000-2001*, p. 21

<sup>44</sup> *OSCE Human Dimension Commitments*, vol. I, *Thematic Compilation*, OSCE/ODIHR, Warsaw 2005.

<sup>45</sup> **Jaskiernia J.**, *Międzynarodowe obserwowanie wyborów jako czynnik demokratyzacji procesów wyborczych* [International Observation of Elections as a Factor of Democratization of the Elections Processes], *Z zagadnień współczesnych społeczeństw demokratycznych* [On the Issues of Contemporary Democratic Societies], eds A. Jamróz, S. Bożyk, Temida 2, Białystok 2006, p. 81.

(Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը) որոշում ընդունեց Լեհաստանում անցկացնել խորհրդարանական ընտրությունների մշտադիտարկում: Մակայն, Յարոսլավ Կաչինսկու կառավարությունն ի սկզբանե դեմ էր դրան՝ պարզաբանելով, որ Լեհաստանը ժողովրդավարական երկիր է, որը չպետք է վերահսկվի միջազգային դիտորդների կողմից: Ի վերջո միջազգային ճնշման ներքո անցկացվեց մշտադիտարկում և պատրաստվեց համապատասխան զեկույց<sup>46</sup>: Նոր օրենսգրքում Լեհաստանը սահմանեց ընտրությունների ընթացքը վերահսկող արտաքին դիտորդների ինստիտուտ<sup>47</sup>:

### Եզրակացություն

1989-1997 թվականներին Լեհաստանում տեղի ունեցած սահմանադրական գործընթացներն ունեին առանձնահատուկ բնույթ: Թեև Լեհաստանը ժողովրդավարությանն անցում կատարած Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի առաջին երկիրն էր, սակայն նոր սահմանադրությունն ընդունվեց միայն մի քանի տարի անց: Ի վերջո Լեհաստանը հաջողեց ունենալ ժողովրդավարական և արդիական սահմանադրություն: Նույնիսկ սահմանադրությանը դեմ քվեարկողներն արդյունքում ընդունեցին, որ այն երկրի քաղաքական համակարգի կայունացման ուժեղ հենք է: Արտաքին ազդեցությունը բավական սահմանափակ էր այդ գործընթացում, քանզի նախքան ԵԽ-ին անդամակցությունը Լեհաստանն արդեն հասցրել էր ձևավորել մի շարք ժողովրդավարական հաստատություններ: Միաժամանակ,

<sup>46</sup> **Jaskiernia A.**, *Przekaz medialny wyborów parlamentarnych 2007 r. w świetle analiz misji obserwacyjnej OBWE* [Medias' Coverage of the 2007 Parliamentary Elections in the light of the OSCE's Observation Mission], *Wybory 2007 i media – krajobraz po „IV RP”* [2007 Elections and the Media – What after the “IVth Republic of Poland”], ed. D. Waniek, AlmaMer Wyższa Szkoła Ekonomiczna, Warszawa 2009, p. 260.

<sup>47</sup> **Jaskiernia J.**, *Międzynarodowi obserwatorzy wyborów w świetle Kodeksu wyborczego* [International Observers in the Light of the Election Code], *Prawo w służbie państwu i społeczeństwu. Prace dedykowane Profesorowi Kazimierzowi Działosze z okazji osiemdziesiątych urodzin* [Law in Service of State and Society. Works dedicated to Professor Kazimierz Działocha], eds B. Banaszak, M. Jabłoński, S. Jarosz-Żukowska, Wrocław 2012, p. 104.



սահմանադրության որոշ հոդվածներ, մասնավորապես՝ նրանք, որոնք կարգավորում են անհատի իրավունքներն ու ազատությունները, հիմնված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում շարադրված ձևակերպումների վրա: ԵԽ-ի սահմանած «ճկուն օրենքների» կիրառումը նպաստեց անկախ դատական իշխանության ձևավորմանը: Եվրոպայում տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը կարևոր դեր խաղաց ինքնակառավարման օրենքների մշակման գործընթացում: Կարելի է փաստել, որ եվրոպական ժողովրդավարական չափանիշները վճռորոշ պայման չէին Լեհաստանի սահմանադրության մշակման գործում, սակայն անհրաժեշտ էին Արևմտյան ժողովրդավարական ավանդույթների վրա հիմնված ճիշտ սահմանադրական ձևակերպումների համար: Այդ չափանիշները կարող են ապագայում ավելի մեծ դերակատարություն ունենալ ինչպես Լեհաստանում, այնպես էլ այլ ժողովրդավարական երկրներում՝ համաշխարհային զարգացումներով պայմանավորված ժողովրդավարական գործընթացների նոր մարտահրավերներին (օրինակ, հաղորդակցման նոր ձևեր, ահաբեկչության հետևանքներ) դիմակայելու համար:

## **Influence of the European Democratic Standards on the Constitutional Development in Poland after 1989**

JERZY JASKIERNIA,  
*Jan Kochanowski University, Poland*

The author analyses the constitutional-writing process in Poland after 1989. Although Poland was the first socialist country from Central and Eastern Europe to choose a democratic path of development, it took almost eight years to pass the Constitution of the Republic of Poland of 2 April 1997. The author describes why building the constitutional compromise was so difficult. He also stresses the role of European democratic standards in this process. Despite that influence not being as strong as in other Central and Eastern European Countries, several constitutional articles (e.g. citizens' rights and freedoms) were adopted almost directly from the European Convention on Human Rights. The important leverage of the Council of Europe was connected with expectation to provide free parliamentary elections in Poland as a condition of membership. The influence of other European organisations (European Union, OSCE), based on that same axiology as Council of Europe, was less important.